Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ
a r a v o t d a i l y

95/4191/ 23 մայիսի 2012 չորեքշաբթի

ISSN 1829-2224
12083
9 771829 222003

## Ա

# Կազատվե՞նք ռուսական բարդակից

Վասիլի Ակսյոնովի լավագույն՝ «Ղրիմ կղզին» վեպի սյուժեն հիմնված է ֆանտաստիկ ենթադրության վրա՝ ինչ կլիներ, եթե... Այդ թերակղզին իբր 1920 թվականին այդպես էլ չի միանում Խորհրդային Ռուսաստանին եւ զարգանում է կապիտալիստական ճանապարհով: Սակայն 80-ական թվականներին Ղրիմի բնակիչները հասկանում են, որ պետք է, այնուամենայնիվ, միանալ «մայրցամաքի» հետ, եւ այդ միացումը տեղի է ունենում սովետին բնորոշ հախուռն ու անտաղանդ ձեւով: Միանգամից սկսվում են իրարանցում, կարգուկանոնի խզում, հերթեր եւ այլն: Եվ ահա բենզալցակայանում խելոք հերթ կանգնած գլխավոր հերոսի ամերիկուհի կինը ցանկանում է լիցքավորել իր ավտոմեքենան, բայց տեղացիները խցկվում են առանց հերթի՝ ագրեսիվորեն բացատրելով կնոջը, թե իր երկրի հոռի բարքերի ժամանակն անցել է, որ հիմա ոչ մի հերթ էլ չի լինելու՝ ով ուժեղ է, նա՛ է առաջինը լիցքավորելու: Ընդ որում, այդ տեղացիները մի քանի տասնամյակ ապրել են քաղաքակիրթ երկրում, ենթարկվել են օրենքների: Բայց վերադարձավ այն դրվածքը, որին սովոր է նրանց գենետիկ հիշողությունը, եւ մարդիկ կրկին իրենց զգացին հարազատ տարերքում:

Մեր, ինչպես նաեւ նախկին կայսրության այլ ժողովուրդների հարազատ տարերքը ռուսական, ներեցեք կոպիտ բառի համար, բարդակն է, որտեղ կարելի է ապրել «տայգայի» օրենքներով՝ գողանալ իրարից եւ պետությունից, խաբել, «քցել», խցկվել առանց հերթի, անցնել կարմիր լույսի տակ, հպարտանալ սեփական օրինախախտ «շուստրիությամբ», նախանձել ուրիշների՝ ավելի մեծ «շուստրիությանը» եւ գումարած այդ ամենին՝ անընդհատ դժգոհել համընդհանուր բարդակից:

Մեղավորն, իհարկե, իշխանությունն է, որը «ժողովրդի մասին չի մտածում»: Համաձայն եմ: Բայց սովորաբար այդ «մտածելը» մեր քաղաքացիների մեծ մասը հասկանում է որպես աշխատավարձերի, թոշակների բարձրացում, լավագույն դեպքում՝ որպես աշխատատեղերի ստեղծում, վատագույն դեպքում՝ որպես «բարեգործություն» (ինչով իշխանությունն, ի դեպ, 5 տարին մեկ զբաղվում է): Սակայն, իմ կարծիքով, այդ ամենը իշխանության կամ պետության գործը չպիտի լինի: Իշխանության միակ պարտականությունն է կարգուկանոն պարտադրելը բարդակին սովոր ժողովրդին: Բերեմ պարզ՝ Ակսյոնովի նկարագրած դեպքին մի քիչ նման օրինակ: Վերջերս հերթ էի կանգնել մի հիմնարկում, որտեղ հերթը կարգավորվում է հատուկ սարքի միջոցով տրվող թղթիկներով: Ինչ խոսք՝ քաղաքակիրթ ձեւ է: Սակայն այն մարդը, որի թղթի վրա գրված էր ինձնից բարձր թիվը, անցավ ինձնից առաջ: Երբ ես ուշադրություն դարձրեցի այդ հանգամանքի վրա, առանց հերթի խցկվածը ինձ նայեց որպես այլմոլորակայինի: Բայց եթե էլի «սովետական» հերթ է լինելու, ի՞նչ իմաստ ունի «քաղաքակիրթ» ձեւեր թափելը: Ի՞նչ պիտի անի իշխանությունը, տվյալ դեպքում՝ գեղեցիկ համազգեստով անվտանգության աշխատակիցը: Նա պետք է տարածքից դուրս հրավիրեր այդ մարդուն:

Վրաստանի իշխանությունը, ինչ-որ կերպ «անկախանալով» այդ ավանդական անկարգություններից, հաջողությամբ ստիպում է իր բնակչությանը ենթարկվել որոշակի կարգուկանոնի: Բայց դա տեւում է դեռ ընդամենը մի քանի տարի: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կլինի, եթե գա այլ՝ հին որակի իշխանություն: Վրացի «գահիշնիկները» մոր փորում կհայտնվեն:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Հարձակման է ենթարկվել իրավապաշտպան կազմակերպության կայքը



Երեկ հարձակման է ենթարկվել Հելսինկյան ասոցիացիա իրավապաշտպան կազմակերպության պաշտոնական կայքը: Aravot.am-ի հետ զրույցում կազմակերպության ղեկավար, իրավապաշտպան Միքայել Դանիելյանը դժվարացավ ասել, թե հատկապես ում կողմից կարող է կազմակերպված լինել հաքերային այդ հարձակումը: «Ես չգիտեմ՝ ովքեր են դա արել. դա կարող էր անել եւ իշխանությունը, որեւէ կուսակցություն, ոչ ֆորմալ ազգայնականները, դա կարող էր անել ԱԱԾ-ն: Որպես իրավապաշտպան կազմակերպություն՝ մենք բոլորի համար շատ անընդունելի դերում ենք գտնվում»: Մեր այն հարցին՝ հնարավո՞ր է, որ այս միջադեպը կապված է կազմակերպության կողմից սեռական փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու կամ DIY ակումբի, կամ երեկ տեղի ունեցած «Բազմազանության երթի» հետ, Դանիելյանն ասաց, թե դա ընդամենը մի փոքրիկ գործ է, որ կազմակերպությունն անում է. «Դա մեր գլխավոր գործը չէ: Մենք մեր կայքում տեղադրել ենք ոչ միայն ակումբին, այլեւ ընտրությունների դիտարկումներին վերաբերող մեր զեկույցը»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Քանի՞ պորտֆել կունենա ՕԵԿ-ը

«Մենք առաջնորդվում ենք քաղաքական կատեգորիաներով, այլ ոչ թե քաղաքական առեւտրով: ՀՀԿ-ն կգնա այն ճանապարհով, որ հասարակության համար ենթադրում է զարգացումների հեռանկար: Նախարարական պորտֆելները նախեւառաջ քաղաքական բեռ եւ պատասխանատվություն են: Պորտֆելների քանակն ինքնանպատակ չէ»,- «Առավոտի» հարցին՝ հավատարմության համար ՕԵԿ-ին լրացուցիչ պորտֆելներ կտրվե՞ն, պատասխանեց ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

Կարդացեք էջ **D**2:

### Ադրբեջանցիներից չենք տարբերվում

Շատերի ու այդ թվում նաեւ «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ եւ իրավապաշտպան Արտակ Զեյնալյանի համոզմամբ՝ DIY բարի վրա կատարվող հարձակումներն ու սեռական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականությունը դրսեւորվում են իշխանությունների թողտվությամբ: Ո՞րն է դրա նպատակը: Ինչո՞ւ պիտի իշխանությունը հրահրի կամ խրախուսի այսօրինակ վարքագիծն ու հարձակումները, կամ ինչո՞ւ չի կասեցնում այդ գործողությունները: «Որովհետեւ իշխանությունները լեգիտիմ չեն: Նրանք սա ուղղակի կամ անուղղակի, գիտակցաբար կամ անգիտակցաբար անում են իրենց իշխանությունը պահելու համար: Սա ավտորիտար ռեժիմներին եւ բռնատիրություններին բնորոշ վարքագիծ է: Համացանցում տեսանյութ կա, որտեղ Բաքվում ընդդիմադիրների ցույցերը շատ դաժան ձեւով ճնշվում են, մարդիկ են ձերբակալվում, բայց Իրանի դեսպանատան առջեւ անցկացվող ցույցը ոստիկանների կողմից ուղղակի կազմակերպվում է, դրա անցկացմանն աջակցություն է ցուցաբերվում ամենամանրակրկիտ ձեւով: Մենք, ստացվում է՝ ադրբեջանցիներից ոչնչով չենք տարբերվում. նույն աշխատաոճն է, նույն վարքագիծը»,- տարակուսեց Արտակ Զեյնալյանը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Ուրբաթ» մամուլի ակումբի հյուրն է «Սարդարապատ» շարժման նախաձեռնող խմբի անդամ Գարեգին Չուգասզյանը:

### Եղանակ

Երեւան + 13 + 26, Շիրակ + 3 + 18, Կոտայք + 3 + 18, Գեղարքունիք + 3 + 18, Լոռի + 6 + 20, Տավուշ + 8 + 23, Արագածոտն լեռներ + 3 + 18, Արագածոտն նախալեռն. 10 + 25, Արարատ + 12 + 27, Արմավիր + 12 + 27, Վայոց Ձոր լեռներ + 3 + 18, Վայոց Ձոր նախալեռն. + 12 + 27, Սյունիքի հովիտներ + 10 + 27, Սյունիքի նախալեռներ + 5 + 20

## Վնասի չափերը ճշտված չեն

«Հանրապետականը ո՞նց կվառվի»,- երեկ տարակուսանք է հայտնել ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը, երբ «Ա1+»-ի թղթակիցը նրանից հետաքրքրվել է, թե ՀՀԿ շենքի հրդեհի արդյունքում հանրապետականները տուժե՞լ են: Երեկ Facebook-ում շատ արագ տարածվեց ՀՀԿ-ի շենքի հրդեհի լուրը, եւ արդեն գրառումներ կան, որ դա պատիժ էր ՀՀԿ-ին՝ նման ընտրություններ անցկացնելու համար: «Դե, հո մեջները չե՞ն պահելու, պիտի արտահայտվեն, չէ՞»,- հակադարձել է ՀՀԿ փոխնախագահը՝ հավելելով. «ՀՀԿ-ն 10 հոգի էլ թշնամի կունենա, կգրեն, էլի»: Գալուստ Սահակյանի խոսքերով՝ պարզապես տանիքն է այրվել, վնասի չափերը դեռ ճշտված չեն:

## ՕԵԿ քաղաքական խորհրդի հայտարարությունը

Մայիսի 22-ին տեղի է ունեցել ՕԵԿ քաղաքական խորհրդի նիստ, որի արդյունքներով ընդունվել են հետեւյալ որոշումները.

1. Հիմք ընդունելով ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի միջեւ տեղի ունեցած քաղաքական խորհրդատվությունները՝ շարունակել քաղաքական համագործակցությունը 2008, 2009թթ. ստորագրված քաղաքական փաստաթղթերի ոգուն համապատասխան, նպատակաուղղել ջանքերը երկրում կուտակված խնդիրները նախաձեռնողական եւ նորարարական մոտեցումներով լուծելու համար:

2. «Օրինաց երկիր» կուսակցության քաղաքական խորհուրդը, հիմք ընդունելով կուսակցական կազմակերպություններից ստացված առաջարկները եւ համակողմանի վերլուծելով 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքները, որոշել է լուծարել ՕԵԿ համայնքային, տարածքային եւ մարզային բոլոր կառույցները եւ ս.թ. հունիսի 1-ից ձեռնարկել կուսակցության վերակազմավորման, կառուցվածքային փոփոխությունների եւ կուսակցությանը անդամագրման կարգի կատարելագործման գործընթաց: Կուսակցության քաղխորհուրդը տեղեկացնում է, որ կուսակցության անդամատոմսի նոր նմուշի ընդունման կապակցությամբ հին անդամատոմսերը համարվում են անվավեր:

«Օրինաց երկիր» կուսակցության վերակազմավորման գործընթացը նպատակաուղղվելու է ներկուսակցական ժողովրդավարության զարգացմանը, կուսակցության անդամների անձնական պատասխանատվության բարձրացմանը, կուսակցության որդեգրած քաղաքական արժեհամակարգին չդավանող պատահական մարդկանցից ձերբազատվելուն:

Կուսակցության անդամներ այսուհետ կարող են դառնալ առնվազն երկու կուսակցականի երաշխավորություն ստացած եւ թեկնածուական փորձաշրջան անցած ՀՀ այն քաղաքացիները, ովքեր կընդունեն կուսակցության ծրագիրը եւ կանոնադրությունը, կհամապատասխանեն կուսակցության անդամ դառնալու համար սահմանված չափորոշիչներին:

Դադարեցվում են ՀՀ այն քաղաքացիների անդամակցությունը «Օրինաց երկիր» կուսակցությանը, ովքեր մինչեւ ս/թ. մայիսի 22-ը հաշվառված են եղել որպես ՕԵԿ անդամներ, մինչեւ նոր կարգին համապատասխան՝ ընդունելության կազմակերպումը:

ՕԵԿ քաղաքական խորհուրդը դիմում է բոլոր կուսակցականներին պատասխանատվության բարձր զգացումով մասնակցել առաջիկա ներկուսակցական որակական ու կառուցվածքային բարեփոխումներին եւ վստահ է, որ այն կնպաստի կուսակցության մարտունակության եւ համախմբվածության ամրապնդմանը:

ՕԵԿ քաղխորհուրդը շնորհակալություն է հայտնում «Օրինաց երկիր» կուսակցության բոլոր այն անդամներին եւ համակիրներին, ովքեր քվեարկել են կուսակցության օգտին, շնորհիվ որի «Օրինաց երկիրը» չորրորդ անգամ անընդմեջ իր ներկայությունը կունենա Ազգային ժողո-

# «Թե վարչապետը, թե ԱԺ նախագահը լինելու են ՀՀԿ-ից»

## Էդուարդ Շարմազանովը պնդում է, որ գործող վարչապետի փոփոխության հարց չի քննարկվել

- Իրականությանը համապատասխանո՞ւմ են մամուլում շրջանառվող այն լուրերը, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը խնդիր է դրել, որպեսզի վարչապետի պաշտոնն իրեն տրվի:

- Ես չեմ կարծում, որ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունում այնքան միամիտ են, որպեսզի մեր առջեւ նման խնդիր դնեն: Թե վարչապետը, թե ԱԺ նախագահը լինելու են ՀՀԿ-ից:

- Իսկ գործող վարչապետի փոփոխության հարց քննարկվե՞լ է:

- Գործող վարչապետի փոփոխության հարց չի քննարկվել:

- Ամսի 24-ին տեղի ունենալիք ՀՀԿ գործադիր մարմնի նիստում միայն այլ կուսակցությունների հետ հնարավոր կոալիցիայի հա՞րցը կիստակեցվի, թե՞ հնարավոր է նաեւ ուրվագծվի հաջորդ կառավարության կազմը:

- Քանի որ ՀՀԿ գործադիր մարմնի վերջին նիստում որեւէ վերջնական որոշում չկայացվեց, հետեւաբար ամսի 24-ի նիստում կքննարկվի այն հարցերի շրջանակը, որը նախորդ նիստում էր: Ես չեմ բացառում, որ պատագա քաղաքական զարգացումների հետ կապված որոշումներ ընդունվեն, ինչպես նաեւ չեմ բացառում, որ այդ նիստից հետո՝ մինչեւ մայիսի 31-ը, եւս մեկ նիստ հրավիրվի: Կքննարկվեն հետընտրական զարգացումների հետ կապված հարցեր, եւ, բնականաբար, չեմ բացառում, որ կուրվագծվեն ապագա կառավարության եւ ԱԺ-ի պաշտոնների խնդիրները:

- Իսկ նախագահ Սարգսյանի հանդիպումներն այլ կուսակցությունների ղեկավարների, մասնավորաբար, ԲՀԿ առաջնորդի հետ դեռ շարունակվո՞ւմ են:

- Սերժ Սարգսյանն այն քաղաքական եւ պետական գործիչն է, ով միշտ պատրաստ է եղել հանդիպել այլ քաղաքական ուժերի ղեկավարների հետ: Այնպես չէ, որ մեկ հանդիպում ավարտվեց եւ վերջ: Այդ հանդիպումները շարունակական են լինելու, որովհետեւ նախագահ Սարգսյանը մեր նորագույն պատմության ամենալայնախոհ եւ հանդուրժող գործիչներից մեկն է: Ուստի պետք չէ զարմանալ, որ նախագահը կարող է հանդիպումներ ունենալ այս կամ այն քաղաքական ուժի ղեկավարի հետ: Միաժամանակ, այդ հանդիպումներն ինքնանպատակ չեն, դրանք ուղղված են լինելու երկրի հետագա զարգացումներին: Մայիսի 24-ի նիստից հետո ավելի մանրամասն տեղեկություններ կտրվեն այդ ամենի մասին:



- ԲՀԿ համամասնական ցուցակի 9-րդ հորիզոնականը զբաղեցնող Հմայակ Հովհաննիսյանն օրերս հայտարարել էր, որ կոալիցիա կազմելու հարցը ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ արդեն իսկ հստակեցված է, քննարկվում է ԲՀԿ-ի՝ մի քանի ավելի պաշտոններ ունենալու խնդիրը: Դա այդպե՞ս է:

- Ինձ ԲՀԿ-ից հետաքրքրում է մեկ կարծիք՝ պաշտոնական կարծիքը, որը հնչում է կամ կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի, կամ մամուլի խոսնակի շուրթերից: Առայժմ ոչ մեկը, ոչ էլ մյուսը նման հայտարարություն չեն արել: Մնացած բոլոր կարծիքները, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, ինչպես նշում է նաեւ ԲՀԿ ղեկավարությունը, խիստ անձնական են:

- «Հանրապետություն» կուսակցությունը եւ Հայաստանի լիբերալ կուսակցությունը լքեցին ՀԱԿ-ը: Դա համարո՞ւմ եք ՀԱԿ-ի պառակտման սկիզբ եւ ինչպե՞ս եք վերաբերվում դրան:

- Ես առհասարակ որեւէ քաղաքական սուբյեկտի ներքին գործերին չեմ վերաբերվում որեւէ կերպ, որովհետեւ դա նշանակում է դատավորի ֆունկցիա ստանձնել: Ես չեմ կարող դատավորի դեր ստանձնել, քանի որ ինքս քաղաքական համակարգի խաղացողներից մեկն եմ: Ուստի ձեռնպահ կմնամ գնահատականներ հնչեցնելուց: Ամեն դեպքում, զուտ մասնագիտական գնահատականս այն է, որ սա գործընթացի սկիզբն է, տարբեր զարգացումներ կարող են լինել, եւ աշնանն ամեն ինչ ավելի հստակ կերեւա: Բայց այն, որ ՀԱԿ-ն իր վարկանիշը կորցրել է վերջին երկու տարիների ընթացքում, մասնավորաբար, Երեւանի ավագանու ընտրություններից հետո, դա փաստ է: Դրա ապացույցն է նաեւ ԱԺ ընտրություններում ՀԱԿ-ի հավաքած 7 տոկոսը:

- Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում այն իրողությանը, որ Երեւանի ավագանու ընտրություններում ՀԱԿ-ն ավելի ծանրակշիռ ներկայություն ունենալով՝ հրաժարվեց մասնակցել աշխատանքներին, իսկ ԱԺ-ում առավել քիչ ներգրավվածությամբ ցանկանում են ազդեցություն ունենալ գործընթացների վրա:

- Պատմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքականության մեջ բոյկոտից մեծապես տուժում է այն քաղաքական ուժը, որը գնացել է բոյկոտի: Մեր նորագույն պատմության շրջանում այդպես եղավ «Արդարություն» դաշինքի հետ, այդպես եղավ «Ժառանգության» հետ, որ մի պահ չեկան պառլամենտ, եւ իրենց թվում էր, թե ամբողջ աշխարհը պետք է իրենց խնդրի, որ գան: Բայց հետո հասկացան, որ իրենց մասին արդեն մոռացել են, եւ ստիպված արդեն վերադարձան: Այդպես եղավ նաեւ ՀԱԿ-ի հետ, երբ բոյկոտեցին Երեւանի ավագանու աշխատանքները, եւ մենք տեսանք, թե երկու տարի հետո դա ինչ տխուր հետեւանք ունեցավ իրենց իսկ արդյունքների վրա: Փաստը հետեւյալն է. հասարակությունը չի սիրում պասիվ, կիսատ-պռատ գործունեություն, հասարակությունը եթե քեզ ձայն է տալիս, դու պետք է գնաս եւ կռիվ տաս քո ձայնի համար այն մարմնում, որտեղ քեզ լիազորել են:

- Նախորդ օրը ՀՀ նախագահը եւ ՀՀԿ վերնախավը Սամվել Ալեքսանյանին պատկանող «Փարվանա» ռեստորանում նշում էին ՀՀԿ-ի եւ Ալեքսանյանի հաղթանակը խորհրդարանական ընտրություններում: Բոլո՞ր հետընտրական խնջույքներին են նախագահը եւ ՀՀԿ վերնախավը մասնակցել, թե՞ Սամվել Ալեքսանյանի նկատմամբ հատուկ վերաբերմունք կա:

- Մենք հատուկ վերաբերմունք ունենք մեր բոլոր պատգամավորների նկատմամբ, ովքեր որ ստացել են ժողովրդի քվեն: Դա միակ դեպքը չէր, բազմաթիվ դեպքեր են եղել, երբ թե ՀՀ նախագահը, թե ՀՀԿ գործադիր մարմնի անդամները մասնակցել են խնջույքի եւ կիսել են տվյալ համայնքի պատգամավորի եւ հասարակության ուրախությունը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «ԱԳ նախարարը տուրիստի կարգավիճակում է»

## Ասում է Եվրոպայի հայկական միությունների ֆորումի նախագահ Աշոտ Գրիգորյանը

Aravot.am-ը Եվրոպայի հայկական միությունների ֆորումի նախագահ Աշոտ Գրիգորյանի հետ զրույցում հետաքրքրվեց՝ արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի պասիվ դիրքորոշումը, երբեմն նաեւ վախվորածությունը արդյոք չի՞ բխում ներքաղաքական խառնաշփոթից: Պարոն Գրիգորյանը պատասխանեց. «Բնական է, որ մեր ներքաղաքական իրավիճակը, հղի լինելով տարբեր ապագա ունեցող լուծումներով եւ անորոշությամբ, ամբողջությամբ կլանել է բոլոր ուժերին: Սփյուռքում էլ ամիսներ շարունակ պասիվություն է, բոլորը սպասում են, տեսնեն՝ Հայաստանում ինչ է կատարվելու: Սակայն ոչ մի երաշխիք չկա, որ կատարվելուց հետո ամեն ինչ ակտիվանալու է: Այսօր ոչ մեկը ոչինչ չի հասկանում, բոլորը տարակուսանքի մեջ են: Ցավալի է, որ ճիշտ լուծումներ ոչ մեկը չգիտի»:

Մեր այն դիտարկմանը՝ սա նշանակում է, որ ՀՀ քաղաքական վերնախավում այսրոպեական քաղաքական շահերը գերադասվո՞ւմ են ՀՀ արտաքին քաղաքական խնդիրներից, Ա. Գրիգորյանը պատասխանեց. «Միշտ էլ մեզ մոտ քաղաքական խաղերն ավելի կարեւորվում են, քան արտաքին քաղաքական խնդիրները, քանի որ քաղաքական խաղերից է կախված տվյալ անձի՝ իր պաշտոնում երկարակեցությունը»:



Պարոն Գրիգորյանը վրդովված է. «Մենք տանուլ ենք տալիս օր առ օր: Օրինակ՝ Սլովակիայի դեսպանը հայտարարել է, որ իրենց երկրում Հայոց ցեղասպանության քրեականացման մասին օրենք չկա, իսկ ՀՀ արդարադատության նախարարը անգամ հարցում չի արել՝ պարզելու, կա՞ օրենք, թե՞ ոչ, քանի որ արդարադատության նախարարը մտածում է՝ արդյոք ինքը վաղը կլինի՞ նախարարի պաշտոնում, թե՞ ոչ: Արտաքին գործերի նախարարն էլ՝ որպես տուրիստ, այցելում է աշխարհի բոլոր երկրները, ընդունվում է այնպիսի մակարդակով, որ մի քանի օր հետո կարող է չունենա, եթե չլինի ԱԳ նախարար»:

Aravot.am-ը հետաքրքրվեց՝ այդ դեպքում ո՞րն է լուծման ճանապարհը, ինչին ի պատասխան՝ Ա. Գրիգորյանը ասաց. «Եթե մինչեւ ընտրությունները գիտեի լուծման ճանապարհը, հիմա արդեն չգիտեմ»:

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 23.05.2012

# Իշխանությունն ու ոստիկանությունը խրախուսո՞ւմ են հարձակումները

## Իրավապաշտպանը պահանջում է պատժել հարձակում կատարողներին եւ դա խրախուսողներին

Մայիսի 21-ին DIY բարի վրա ծայրահեղ ազգայնականների հերթական հարձակման փաստով ՀՀ ոստիկանությունում նախաքննություն է ընթանում: Ոստիկանությունը երեկ սկսել է հսկողություն իրականացնել բարի մոտ: Նախօրեին էլ երիտասարդ ազգայնականների մի խումբ էլ հարձակվել էր մշակութային բազմազանության օրվան նվիրված երթի մասնակիցների վրա՝ հայտարարելով, թե դա «գեյ-պարադ» է ու վանկարկելով՝ «մահ ոսոխին» եւ «զիգհայլ» եւ այլն:

Վերջին օրերին մեծ աղմուկ հանած եւ միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում հայտնված այս հակադրության շուրջ «Առավոտը» զրուցեց «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ եւ իրավապաշտպան Արտակ Զեյնալյանի հետ: «Ես՝ որպես քաղաքացի, որպես իրավապաշտպան, դատապարտում եմ DIY բարի վրա, նաեւ երթի մասնակիցների դեմ կատարվող հարձակումներն ու միացել եմ նաեւ հասարակական կազմակերպությունների այն հայտարարությանը, որով դատապարտվել են Գյումրիի «Ասպարեզ» ժուռնալիստների ակումբի, նաեւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նկատմամբ կատարված հարձակումները, որոնք եղան ադրբեջանական ֆիլմերի ցուցադրության հետ կապված: Մենք բոլոր այս դեպքերում տեսնում ենք պետական մարմինների մասնակցությունը՝ որպես կազմակերպչի: Այն տեսահոլովակները, որ շրջանառվում են համացանցում, թույլ են տալիս կասկածելու առնվազն, որ դա արվում է իրավապահ մարմինների թողտվությամբ կամ հանդուրժողականության պայմաններում՝ եթե ոչ ուղղակի հրահանգով կամ պատվերով: Տպավորություն է, որ կա այդ թողտվությունը: Միանշանակ դատապարտում եմ տեղի ունեցածը, որը դեռ շատ բացասական հետեւանքներ է ունենալու՝ հասարակության ներսում լարվածությունը շարունակելու է մեծանալ ու որեւէ ձեւով չի նպաստելու Հայաստանի միջազգային վարկին: Կարծում եմ՝ իշխանությունները այստեղ լուրջ անելիք ունեն եւ առաջինը, որ պիտի անեն, պատասխանատվության ենթարկեն հարձակումը կատարողներին, անեն ինչ անեն, որպեսզի վերականգնվեն մարդկանց խախտված բոլոր իրավունքները, այդ թվում՝ սեփականության իրավունքը, գույքին պատճառված նյութական վնասը, նաեւ պիտի պատասխանատվություն կրեն նրանք, ովքեր խրախուսում են այս անհանդուրժողականությունը, հարձակումը մարդկանց վրա, ովքեր այլախոհներ են՝ այլ կերպ են մտածում կամ այլ կերպ են ապրում: Իհարկե, ես որեւէ կերպ չեմ պաշտպանում մարմնավաճառությունը, չեմ կիսում նրանց գաղափարները, բայց նրանք շատ որոշակի իրավունքներ ունեն, նրանց սեռական կողմնորոշումը Հայաստանում քրեորեն պատժելի արարք չէ, եւ հակառակը՝ քրեորեն հետապնդելի են այն հարձակումները, որոնք իրականացվում են DIY ակումբի եւ այնտեղ հաճախող մարդկանց նկատմամբ: Կոնկրետ դեպքում խախտվել է նաեւ այդ մարդկանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, նրանք ենթարկվել են ռիսկի՝ մարմնական վնասվածքներ ստանալու կամ նույնիսկ կյանքին սպառնացող ռիսկի են ենթարկվել, նրանց սեփականության իրավունքն է խախտվել, նրանց տարածքի անձեռնմխելիության իրավունքն է խախտվել: Կարծում եմ՝ այստեղ լուրջ միջամտություն պետք է լինի: Այս մասին մենք ասել էինք նաեւ «Ասպարեզ» ակումբի եւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի վրա կատարված հարձակումների ժամանակ, բայց դրանք որեւէ հետեւանք չեն ունեցել, եւ իշխանությունները որեւէ կերպ չեն արձագանքել: Վստահ եմ՝ սա շատ վատ է անդրադառնալու Հայաստանի վրա»,- նկատեց իրավապաշտպանը:




Արտակ Զեյնալյանին՝ որպես արցախյան ազատամարտի մասնակցի, ով բառիս իսկական իմաստով իր արյան ու առողջության գնով ազգ ու Հայրենիք է պաշտպանել, հարցրինք՝ իսկ միգուցե DIY ակումբի, համասեռամոլների դեմ հարձակումներն իրո՞ք ազգափրկիչ ու հանուն Հայաստանի առաքելություն է, գուցե մեր ազգի ու պետության անվտանգությանը այս պահին էլ հենց սեռական կամ կրոնական փոքրամասնություններն ու ադրբեջանական ֆիլմեր դիտե՞լն են սպառնալիք եւ ոչ թե ծաղկող կոռուպցիան, ընտրությունները կեղծելը:

«Ոչ, բոլորովին: Մի քանի օր առաջ հրապարակվեց ադրբեջաներեն դասագիրք: Ողջունելի է դա: Մենք պետք է ճանաչենք մեր հարեւաններին՝ անկախ այն բանից, թե նրանց հետ ինչպիսի հարաբերությունների մեջ ենք գտնվում: Որպեսզի կարողանանք գնահատական տալ ինչ-որ բանի՝ պիտի դա ճանաչենք, տեսնենք, հասկանանք՝ լա՞վն է, վա՞տն է, ինչի՞ համար է: Որքան նրանց լավ ճանաչենք, այնքան նրանք կանխատեսելի կլինեն մեզ համար: Եթե մարդիկ դեմ են այդպիսի միջոցառումներին՝ կարող են չմասնակցել, եթե դեմ են դրան՝ կարող են խաղաղ ցույց անել դրա դեմ, դա նրանց իրավունքն է, միայն խաղաղ ցույց: Բայց այն, ինչ ես տեսնում եմ՝ խաղաղ ցույց չէ, եւ նման վարքագիծ դրսեւորելը ցույց է տալիս կամ բացահայտում է այն հոգեբանությունը, որ սկսել է ձեւավորվել՝ պարտվողի հոգեբանությունը, ու դա շատ վատ է: Դա պարտվողին բնորոշ վարքագիծ է: Ես տեսել եմ տեսանյութեր, որտեղ կոչ է արվում հաշվեհարդար տեսնել այն մարդկանց հետ, ովքեր կազմակերպում կամ մասնակցում են այդ դիտումներին: Սա, կարծում եմ, ազգային թշնամանք է, որ սերմանվում է, ինչը Հայաստանի օրենսդրությամբ արգելված է, բացի այդ՝ դա նաեւ կոնկրետ անձանց դեմ ուղղված հաշվեհարդար տեսնելու սպառնալիք է, ինչը եւս քրեորեն հետապնդելի արարք է»,- հայտարարեց Զեյնալյանը:

Անդրադառնալով մասնավորապես DIY-ի կամ սեռական փոքրամասնությունների դեմ հարձակումներին՝ նա նկատեց, թե՝ որքան էլ նրանք փոքրամասնություն են, լուսանցքային են, սակայն նրանք եւս պաշտպանված են օրենքով եւ ունեն կյանքի, անմարդկային վերաբերմունքից զերծ լինելու, խաղաղ հավաքների ազատության իրավունք, եւ նրանց նկատմամբ նման ոտնձգությունները արգելված են հենց ՀՀ օրենքով: «Մենք Սահմանադրությունն ընդունել ենք եւ ամրագրել ենք հենց այդ սկզբունքները»,- հիշեցրեց իրավապաշտպան Արտակ Զեյնալյանը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Ժառանգությունում», այնուամենայնիվ, ինքնաբացարկներ են կորզվում

«Ժառանգությունը» դեռ չի հստակեցրել, թե, ի վերջո, այդ կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվածներից ովքե՞ր են համալրելու նոր գումարման խորհրդարանի իրենց խմբակցությունը: Այդ հարցը դեռ քննարկման փուլում է, այն կհստակեցվի եւ համապատասխան որոշում կընդունվի «Ժառանգություն» կուսակցության հունիսի 2-ին կայանալիք համագումարում: Այդ մասին Aravot.am-ի հետ զրույցում, անդրադառնալով այս օրերին շրջանառվող տեղեկություններին, թե՝ կուսակցությունում փորձում են համամասնական ցուցակի թեկնածուներից ինքնաբացարկներ կորզել, ասաց «Ժառանգության» մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը՝ ըստ էության շիերքելով մեր տեղեկությունները:

Հարցին՝ այսինքն՝ հնարավո՞ր է, որ ընտրությունների արդյունքում թվով 5 մանդատ ստացածների՝ ըստ համամասնական ցուցակի առաջին հնգյակում փոփոխություններ լինեն, Խուրշուդյանն արձագանքեց. «Ամեն ինչ հնարավոր է»: Կուսակցության մամուլի խոսնակը ի պատասխան մեր հարցադրմանը՝ հավելեց նաեւ, թե համագումարում քննարկվելու է «Ժառանգության» թեկնածուների հարցը, իսկ ինչ վերաբերում է համամասնական միասնական ցուցակում «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունից առաջադրվածների հնարավոր ինքնաբացարկներին, ապա Խուրշուդյանը դժվարացավ նրանց վերաբերյալ որեւէ բան ասել:

Մեր տեղեկություններով՝ այս օրերին «Ժառանգությունում» նաեւ համամասնական ցուցակի 9-րդ հորիզոնականում հայտնված հանրային սեկտորի ներկայացուցիչ, բլոգեր Իզաբելլա Աբգարյանին է առաջարկվել ինքնաբացարկ հայտնել, բայց նա հրաժարվել է: Ինքը՝ տիկին Աբգարյանը, Aravot.am-ի հետ զրույցում հաստատեց, որ իրեն առաջարկվել է ինքնաբացարկ հայտնել, բայց հերքեց, թե հրաժարվել է դա անելուց: Բլոգերն ասաց, թե ժամանակին «Ժառանգությունն» ինքն էր իրեն առաջարկել ընդգրկվել կուսակցության համամասնական ցուցակում, եւ ինքը համաձայնել էր, ու հիմա, երբ առաջարկվել է ինքնաբացարկ հայտնել, ինքը ճիշտ է համարել դա անել: Նա ասաց, թե ինքն, այսպես թե այնպես, խորհրդարան չի անցել, եւ ինքնաբացարկ հայտնելն այդ իմաստով ոչինչ էլ չէր նշանակում: Իզաբելլա Աբգարյանը հավաստիացրեց, թե ինքը շարունակում է «Ժառանգության» հետ լավ հարաբերություններ ունենալ ու մտադիր է շարունակել համագործակցությունն այս քաղաքական ուժի հետ:

Հիշեցնենք, որ մայիսի 6-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Ժառանգությունը» խորհրդարանում ստացել է 5 տեղ, եւ ըստ համամասնական ցուցակի հերթականության՝ ԱԺ-ում մանդատներ են ստանալու Րաֆֆի Հովհաննիսյանը, Խաչատուր Քոքոբելյանը, Զարուհի Փոստանջյանը, Ալեքսանդր Արզումանյանն ու Ռուբեն Հակոբյանը: Ըստ որոշ տեղեկությունների՝ չի բացառվում, որ ինքնաբացարկ հայտնի կամ հայտնողներից մեկը լինի հենց կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը: ԱԺ դեռ գործող խորհրդարանում «Ժառանգություն» խմբակցության ղեկավար, իսկ համամասնական ցուցակում 8-րդ հորիզոնականում հայտնված Ստեփան Սաֆարյանի՝ կրկին խորհրդարանում հայտնվելու համար անհրաժեշտ է լինելու, որ բացի Րաֆֆի Հովհաննիսյանից՝ ինքնաբացարկ հայտնեն նաեւ ցուցակի 6-րդ տեղում հանգրվանած Թեւան Պողոսյանն ու ազատ դեմոկրատ Մասիս Այվազյանը: Հիշեցնենք, սակայն, որ ազատ դեմոկրատներն արդեն առիթ ունեցել են հայտարարելու, որ իրենք մանդատներից հրաժարվելու խնդիր չեն քննարկում:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### Սովետական այլախոհներին անհանգստացրել է նաեւ Հայաստանում մարդու իրավունքների վիճակը

Հայտնի այլախոհները եւ խորհրդային իրավապաշտպանները ստեղծել են Ղրիմյան ֆորում՝ կոմունիստական ռեժիմի քաղաքական բանտարկյալների ամենամյա խորհրդաժողով, որի նպատակն է ապահովել նախկին ԽՍՀՄ իրավապաշտպան շարժման ժառանգականությունը՝ հետխորհրդային պետություններում քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեության մեջ: Ուկրաինական newsru.ua կայքն այս առնչությամբ նշում է, որ ֆորումը ստեղծվել է Սիմֆերոպոլում կայացած աշխատանքային խորհրդակցության ընթացքում, որին մասնակցել են հայտնի այլախոհներ եւ ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների համար պայքարողներ:

Հանդիպման մասնակիցներն ընդունել են հայտարարություն՝ Ղրիմյան ֆորում ստեղծելու մասին, որում մասնավորապես նշել են, թե մի շարք հետխորհրդային պետություններում քաղաքացիական իրավունքների եւ մարդու ազատությունների վիճակն ակնդետ ուշադրության կարիք ունի. «Իսկ հաճախ էլ միջազգային կազմակերպությունների եւ իրավապաշտպան կազմակերպությունների անհապաղ արձագանքման կարիքն է լինում: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Կենտրոնական Ասիայի պետությունները, Հայաստանը, Բելառուսը, Ռուսաստանը, Ուկրաինան արդեն տեղի է ունեցել կամ տեղի է ունենում շեշտակի նահանջ ժողովրդավարական գործընթացներից, ինչն ուղեկցվում է քաղաքական ընդդիմադիրների եւ քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ հետապնդումներով»:

Խորհրդակցությանը մասնակցել են Ռուսաստանից՝ Լյուդմիլա Ալեքսեեւան, Հայաստանից՝ Վարդան Հարությունյանը, Մեծ Բրիտանիայից՝ Վլադիմիր Բուկովսկին, Լեհաստանից՝ Պյոտր Խլեբովիչը եւ այլք:

Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# Կարկուտը գյուղացիների «տունը քանդել է»

## Գյուղատետերի խոսքերով՝ ՀՀ կառավարությունն էլ չի պատրաստվում օգնության ձեռք մեկնել

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ընտրություններից առաջ ջանք ու եռանդ չէր խնայում գյուղացիների սիրտը շահելու համար ու համոզելու, որ ընտրեն իր կուսակցությանը՝ ՕԵԿ-ին, խոստանալով գյուղերը շենացնել, գյուղացու հոգսն էլ՝ թեթեւացնել: Այս օրերին նախարարը նույն ջանասիրությամբ անտարբերության է մատնել կարկտահարված համայնքները: Վերջին օրերին Սյունիքի մարզի մի շարք գյուղեր ուժեղ կարկուտների պատճառով բավականին մեծ վնասներ կրեցին: «Առավոտի» հետ զրուցած բոլոր գյուղապետերը միաբերան վստահեցրին՝ գյուղնախարարությունից ոչ ոք, նույնիսկ ձեւի համար, ոտք չի դրել իրենց համայնքները:

Դեռ վերջնական չհաշվարկած նախորդ կարկտահարության վնասների ծավալը՝ երեկ առավոտյան Սյունիքի որոշ գյուղերում կրկին ուժեղ կարկուտ է տեղացել եւ հողին հավասարեցրել գյուղացու բերքը:

Գյուղապետերի խոսքերով՝ «բնությունն այնպիսի աղետ է բերել գյուղացու գլխին», որ երբ զանգահարում էինք որեւէ գյուղապետի, նա մեզ հորդորում էր զրուցել նաեւ մեկ այլ՝ ավելի շատ տուժած համայնքի ղեկավարի հետ:

«Առավոտի» հետ զրույցում Սյունիքի մարզի Շվանիձոր համայնքի ղեկավար Հովհաննես Օհանյանն ասաց, որ երեկվա կարկուտի ու հեղեղի արդյունքում գյուղի տնտեսությունների կեսից ավելին տուժել է՝ խաղողի այգիներից գրեթե բան չի մնացել, նռնենիների ծաղիկներն ամբողջությամբ գետնին են թափվել, պակաս չեն վնասվել նաեւ թզենիներն ու մյուս պտղատու ծառերը: Պարոն Օհանյանի ներկայացմամբ՝ հեղեղի պատճառով գյուղի ամբողջ ոռոգման ցանցը վնասվել է. «Սելավը մտել է 3 տուն, 3 կամազ ցեխախառն ջուր էինք տներից հանում, վերմակները ջրի վրա լողում էին: Նուռ, թուզ կառայլոկ. բան չի մնացել: Իմ այգու կարտոֆիլը ծաղկած էր, պիտի հանեինք՝ ուտեինք, էն էլ էսօր կավը լցվել է, սաղ քշել-տարել»: Մեր այն հարցին, թե մոտավորապես որքան կկազմի վնասը, համայնքապետը պատասխանեց՝ «Անընդհատ էլ նման բան լինում է: Էս տարիների ընթացքում ես բոլոր պետական մարմիններին ներկայացրել եմ՝ ոչ մի բան էլ չեն անում: Մենք լրիվ պրոբլեմների մեջ ենք: Այ ցավդ տանեմ, պետության կողմից ոչ մի բան չի եղել, չի լինի, էդքան բան, դուք պատկերացնո՞ւմ եք՝ մարդիկ ոնց են լաց լինում»:

Եթե մյուս համայնքների նման այս գյուղերն էլ ունենային հակակարկտային կայաններ, որքանո՞վ դրանք կպաշտպանեին նման իրավիճակներից՝ հարցին գյուղապետը պատասխանեց. «Ես կառավարությանն առաջարկել եմ՝ 2 գյուղերը՝ Շվանիձորն ու Ալվանքը, իրար շատ մոտ են՝ 2 հատ սարի վրա դնում են՝ հարցերը լուծվում են, բայց դե, ո՞վ է մեզ բանի տեղ դնում»:

Նույն կարծիքի է նաեւ կրկին կարկտահարությունից տուժած Ալվանք գյուղի ղեկավար Վարուժան Թումանյանը: Նրա խոսքերով՝ «Ե՞րբ են Մեղրիին հաշվի առել, որ հիմա էլ բանի տեղ դնեն: Ոչ ոք հույս չունի, որ կառավարությունը կօգնի: Իսկ էդ հակակարկտային կայանների երգը մենք վաղուց ենք երգել, բայց ոչ մեկը չի լսում: Անցյալ տարի ձմռանը ցրտահարվեց, էլի ոչինչ չարեցին, մի քանի տարի առաջ նույն ձեւի կարկուտ եկավ, ոչինչ չարեցին: 2003-ից մինչ օրս նման բաներ հաճախակի են լինում, բայց ոչ մի անգամ չեն օգնել»:

Կապանի տարածաշրջանի Ճակատեն գյուղն ամենաշատն է տուժել: Վերջին 3 կարկտահարությունների ժամանակ եթե մյուս համայնքներում միշտ չէ, որ վնասներ են եղել, ապա այս համայնքում, ինչպես ասում են՝ «կարկուտը ծեծած տեղն է ծեծում», 3 անգամ էլ հացահատիկի՝ հեկտարներով դաշտերը կարկտահարվել են: Գյուղապետ Արծրունի Հարությունյանի խոսքերով՝ ամեն տարի գյուղը կարկուտից տուժում է. «Գարնան բերանը սիրուն ծաղկում ա, ասում ենք՝ վա՜յ, ինչ լավ ա, ի՜նչ բերք ունենք, բայց մեկ էլ կարկուտը սաղ հողին ա հավասարեցնում: Էսօր ծառերի վրայի խնձորը կարկուտը կիսել ա՝ թափել, ճյուղերի կաշին հանել ա, դաժե ծառ կա, որ կարող ա չորանա ու դառնա վառելիք, էդ աստիճանի վնաս է հասցրել»:

Պարոն Հարությունյանի ներկայացմամբ՝ առաջին կարկուտի ժամանակ՝ մայիսի կեսերին, համայնքի 25 հեկտար հացահատիկի դաշտերն են փչացել, իսկ 2-րդ, 3-րդ կարկուտների ժամանակ՝ ամբողջ գյուղի բանջարաբոստանային կուլտուրաները. «Ամեն մի տունը հեչից 150 հազար դրամի վնաս ա կրել: Էլ չեմ խոսում պտղատու ծառերի վնասներից: Մեր հույսն ու հավատը մեր բախչեն է, սաղ ջահելությունը քոչում է, մեծերն էլ մեռնում են՝ դռները փակվում են հավերժ, եղանակն էլ հերներս անիծում է: Հուսահատված վիճակ է, սահմանամերձ գյուղերին ընդհանրապես ուշադրություն չեն դարձնում: Եթե 5 տարի էլ սենց շարունակվի, կարող է գյուղում մի 10 շունչ էլ չլինի»: Կառավարությունն այն աստիճանի անլուրջ է վերաբերվում այս ամենին, որ գյուղացիներն ու գյուղապետը, ինչպես ինքը վստահեցրեց, անձամբ են տեսանկարահանել վնասված ծառերը, որպեսզի կառավարության հետ խոսեն ապացույցներով ու փաստերով:

Կոռնիձոր համայնքում էլ մեծ մասամբ տուժել են հացահատիկի ցանքատարածքները: Գյուղապետ Սուրեն Սիմոնյանը վստահեցրեց, որ առայժմ չեն հաշվարկել պտղատու այգիների վնասները, եթե դրանք էլ հաշվարկեն, ապա գյուղը մոտ 90 միլիոն դրամի վնաս է կրել: Չնայած մարզպետարանի հանձնաժողովը տեղում ստուգել է, սակայն, գյուղապետի խոսքերով՝ նամակ են ուղղել կառավարությանը. «Խնդրել ենք գան, իրենց աչքով տեսնեն ամեն ինչ: Մարդիկ էդքան ներդրում են արել՝ վառելիք, սերմ, պարարտանյութ, էդ սաղ կարկուտը տարավ, բայց ոչ էլ հույս ունենք, որ մեզ կօգնեն»:

Կարկուտը կոռնիձորցիների «տունը քանդել» է: Գյուղացիները կառավարության ծրագրով, այսպես ասած՝ վերադարձնության հացահատիկ էին ստացել եւ, ըստ պայմանագրի, բերքը ստանալուց հետո պետք է կառավարությանը վճարեն 1 կիլոգրամի դիմաց 160 դրամ: «Պատկերացնո՞ւմ եք, 27 տոննայի գումար պիտի վճարենք, 2-րդ ծրագրով էլ՝ 1/2 հարաբերակցությամբ էլիտար հացահատիկի սերմացուն պիտի վերադարձնեինք, բայց բերք չենք ստացել: Սա աղետ էր, չգիտեմ՝ ինչ է լինելու սրա վերջը»: Ինչ վերաբերում է հակակարկտային կայաններ տեղադրելուն, ապա սրա վրա էլ հույս չեն դնում. «Միայն Արարատյան դաշտավայրի վրա են ուշադրություն դարձնում: Այնտեղ էդ կայանների շնորհիվ գոնե վնասները քիչ են լինում»: Մեզ հետ զրուցած Նռնաձորի եւ Խնձորեսկի գյուղապետերը վստահեցրին, որ թեեւ իրենց համայնքներում մեծ ծավալների չեն հասել վնասները, բայց նրանք էլ հույս չունեն, որ կառավարությունը փոխհատուցում կտրամադրի:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ



### Գազի հաշվիչը մոտեցրել են բաժանորդին

«Առավոտ» օրաթերթի մայիսի 18-ի համարում հրապարակված «Գազի հաշվիչը մի քանի փողոց այն կողմ են փակցրել» հոդվածի առնչությամբ, որտեղ մասնավորապես անդրադարձել էինք Զովքի մի բնակչի բողոքին, թե՝ գազի տեսուչը հաշվիչը հանել է եւ մի քանի փողոց այն կողմ է տեղադրել, ինչի պատճառով էլ բաժանորդը չի կարողանում հետեւել գազի հաշվիչի ցուցմունքին, «ՀայՌուսգազարդ» ընկերության հասարակայնության հետ կապերի ծառայությունից «Առավոտին» հայտնում են. «Կոտայքի մարզի Զովքի գյուղի 12-րդ նրբանցքի 8-րդ տունը գազիֆիկացվել էր 2008 թվականին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված նրբանցքում գործող գազատար չի եղել, Անատոլյա Խաչատրյանի տունը գազիֆիկացվել է զուգահեռ փողոցում գտնվող գազատարից եւ նշված տան մուտքագիծն անցնում է երկու տնամերձ հողատարածքների միջով: Հավանական վթարներից եւ բնական գազի կորուստներից խուսափելու նպատակով գազահաշվիչը տեղադրվել է սահմանազատման կետում»:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ-ի աշխատակիցները մայիսի 18-ին այցելել են Զովքի գյուղ՝ տեղում ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Հաշվի առնելով Ա. Խաչատրյանի առողջական վիճակը՝ «ՀայՌուսգազարդն» ընդառաջել է նրա խնդրանքին, եւ գազահաշվիչը տեղափոխվել է բաժանորդի առանձնատան մոտ:

# ԲՀԿ-ական պատգամավորի «գազելները» ավտոկայանից տեղափոխեցին կայարան

Մի քանի օր է՝ Գյումրիից Երեւան ուղեւորվող միկրոավտոբուսները կայանում են ոչ թե մայրաքաղաքի Կիլիկիա թաղամասում գտնվող ավտոկայանում, այլ երթուղային կայարանի մերձակայքում՝ Սեւան փողոցում: Սա անակնկալի է բերել ու ինչ-որ տեղ զայրացրել է գյումրեցի ուղեւորներին, քանի որ փոփոխությունը, ըստ նրանց, կատարվել է հասարակությանն առանց նախապես իրազեկելու: Օրինակ՝ երեկ նրանցից մեկը հասել է ավտոկայան՝ Գյումրի ուղեւորվելու համար, սակայն տեսել է, որ հանել են ցուցանակը, այստեղ անգամ չեն բարեհաճել տեղեկացնել, թե որտեղից կարելի է նստել Գյումրու միկրոավտոբուսը: Ինչպես մեր զրուցակիցը դժգոհեց, ընդհակառակը՝ տաքսու վարորդները առիթը բաց չեն թողել մոլորված ուղեւորներից բավականին մեծ գումարներ աշխատելու:



Գյումրեցիները վրդովված են, որ իրենց չեն տեղեկացրել միկրոավտոբուսների նոր կանգառի մասին:

Այս փոփոխության առնչությամբ արդեն բուռն քննարկումներ են գնում, եւ Facebook սոցիալական կայքի գյումրեցի օգտատերերն էլ հարցը քաղաքականացրել են: Նկատի ունենալով, որ Գյումրի-Երեւան երթուղին սպասարկող կազմակերպություններից մեկը՝ «Տրանս ակնթարթ» ՍՊԸ-ն, պատկանում է ԱԺ պատգամավոր, ԲՀԿ Շիրակի մարզային կառույցի պատասխանատու Մարտուն Գրիգորյանի ընտանիքին, իսկ այս պատգամավորը վերընտրվեց երկրորդ անգամ՝ հաղթելով «Շիրակ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր ՀՀԿ-ական Արման Սահակյանին, գյումրեցիները գրում են. «Շիրակի մարզի սիրելի բնակիչներ, այժմ արդեն Երեւանից վերադառնալիս Երեւանի ավտոկայարանում Գյումրի մեկնող երթուղային տաքսի մի փնտրեք, միայն Գյումրիի «Տրանսակնթարթին» պատկանող գազելների կանգառը Երեւանում տեղափոխել են երկաթուղային կայարանից ավելի հեռու՝ Սեւանի փողոց: Գուցե պատճառը մեր գազելների ժամկետանց լինե՞լն է, ասենք՝ շատ հին են ու հիմնականում ոչ սարքին, կամ սա առաջին պատժամիջոցի կիրառո՞ւմն է ոչ իշխանամետ գյումրեցիների նկատմամբ»: Մեկ այլ օգտատեր էլ դժգոհել է, թե ինչո՞ւ են նորից կուժն ու կուլան գյումրեցիների գլխին կոտրում եւ այլն:

«Առավոտը» կապի եւ տրանսպորտի նախարարության մամլո քարտուղար Սուսաննա Տոնոյանից հետաքրքրվեց, թե ինչո՞ւ են Գյումրիի «գազելների» կայանատեղին ավտոկայանից տարել, հասցրել Սեւանի փողոց, ինչին ի պատասխան՝ նա տեղեկացրեց, որ կայարանից ուղեւորահոսքը շատ է, այստեղից մետրոյի առկայության պայմաններում ուղեւորներին ավելի մատչելի կլինի երթեւեկել: Մեր այն դիտարկմանն էլ, թե այստեղ քաղաքական ենթատեքստ չկա՞, գյումրեցիները քաղաքականացնում են տեղափոխումը, Սուսաննա Տոնոյանն ասաց, որ Գյումրին բացառություն չէ, Գյումրիից բացի՝ փոխել են նաեւ այլ տեղանքների միկրոավտոբուսների կայանատեղին:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Առավոտ
a r a v o t   d a i l y
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 23.05.2012

# «Ուսերից բռնեցի ու պտտակեցի նրա քիթ-բերանին»

## 45-ամյա տաշիրցու «պտտակը» խլել է կնոջ կյանքը

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Մուշեղ Հարությունյանի նախագահությամբ, ընթանում է Տաշիր քաղաքի բնակիչ, ազգությամբ եզդի Սերգեյ Ախմեդովի դատաքննությունը:

45-ամյա Ախմեդովը մեղադրվում է կնոջը՝ Նատալյա Մովսիսյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու մեջ, ինչը անզգուշությամբ առաջացրել է վերջինիս մահը:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Սերգեյ Ախմեդովը իր տան բակում կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության ընթացքում մի քանի անգամ ձեռքով հարվածներ է հասցրել կնոջ դեմքին եւ գլխին՝ դիտավորությամբ պատճառելով վերջինիս առողջությանը ծանր վնաս: Արդյունքում՝ Նատալյա Մովսիսյանը դեպքից 12 օր անց ներգանգային հեմատոմայից մահացել է «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում:

Հակառակ սրան՝ Սերգեյ Ախմեդովը պնդում է, որ իր հասցրած պտտակը չէ կնոջ մահվան պատճառը. կինը տան աստիճաններից վայր է ընկել, ինքն էլ, ընտանեկան հանգամանքներից ելնելով, կարծել է, թե նա խուսափում է իրեն օգնելուց՝ այդ օրը մահացած մոր հանդերձանքը կարգի բերելու գործում, ուսերից բռնելով մեկ անգամ հարվածել է կնոջը:

«Ուսերից բռնեցի ու պտտակեցի նրա քիթ-բերանին, էլ ոչ մի բան չեմ արել, աստիճաններից ընկնելուց է վնասվել»,- դատարանում բացատրում էր Ախմեդովը՝ ափսոսանք հայտնելով կնոջ մահվան կապակցությամբ:



Ախմեդովի փաստաբան Ալեքսանդր Ծատինյանը, չժխտելով իր պաշտպանյալի կողմից կնոջը մեկ անգամ հարվածելու հանգամանքը, պնդում է, որ Նատալյա Մովսիսյանի մահը վրա է հասել ոչ թե անուսնու պատճառած վնասի հետեւանքով, այլ տուժողի հետագա գործողություններն են մահվան պատճառ դարձել:

«Նա հրաժարվել է բուժում ստանալուց, բացի դրանից՝ բուժումը ստանալու ընթացքում օգտագործել է ալկոհոլի մեծ քանակություն: Բնականաբար, նման պայմաններում հնարավոր չէր, որ նա արդյունավետ բուժում ստանար, հետեւաբար՝ իմ պաշտպանյալը մեղավոր չէ կնոջ մահվան համար»,- բացատրում է Ա. Ծատինյանը:

Նա առաջադրված մեղադրանքը անհիմն է համարում:

Փաստաբանը ուշադրություն է հրավիրում Նատալյա Մովսիսյանի մահվան կապակցությամբ կատարված փորձաքննությանը:

Համաձայն փորձաքննության տվյալների՝ Նատալյա Մովսիսյանը «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ ընդունվելու հաջորդ օրը ինքնակամ դուրս է գրվել, արդյունքում՝ բուժանձնակազմը զրկվել է բազմակողմանի հետազոտությունների եւ մահվան պատճառը պայմանավորող հիմնական մարմնական վնասվածքը՝ ներգանգային հեմատոման հայտնաբերելու հնարավորությունից:

«Տեսականորեն կարելի է նշել, որ եթե հիվանդ Մովսիսյանը ինքնակամ չհեռանար հիվանդանոցից, գտնվեր բժիշկների դինամիկ հսկողության տակ, հայտնաբերվեր հեմատոման, ապա չի բացառվում, որ ժամանակին կատարված վիրահատությամբ հնարավոր լիներ փրկելու նրա կյանքը»,- նշված է կատարված փորձաքննության հետեւության բաժնում:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

# Իրավագետը մեղադրում է բժշկին

## Բժիշկն էլ պնդում է, որ Ռուբենն իր հորը ծանր վիճակում է բերել հիվանդանոց

«Վարկած» մամուլի ակումբում լրատվամիջոցներին երեկ հանդիպած իրավագետ Ռուբեն Այվազյանը տեղեկացրեց 82-ամյա հոր՝ Լեւի Այվազյանի մահվան հանգամանքները: Նա մեղադրում էր բժիշկ Տիգրան Այյանյանին, որն, ի դեպ, կամավոր ներկայացել էր երեկվա հանդիպմանը:

Ռ. Այվազյանը տեղեկացրեց, որ Երեւանի քաղաքապետի թիվ 10/Ա-2825 ուղեգրով հորը տրվել է անվճար բուժման հնարավորություն թիվ 3 կլինիկական հիվանդանոցի սրտաբանական բաժնում:

«Պայմանավորվածության համաձայն, սրտաբանական բաժնում հորս բուժող բժիշկ նշանակվեց Տիգրան Կարենի (ազգանունը անհայտ), որն առանց որեւէ հետազոտության՝ որոշեց, որ իբր որովայնի շրջանում առկա է 15-20 լիտր հեղուկ: Բժիշկ Տիգրանը չունենալով ուրոլոգի կամ նեֆրոլոգի համապատասխան որակավորում՝ սկսեց հորս օրգանիզմի ջրազրկումը: Հորս նշանակվեց մեծ քանակության ջրազրկող Ֆուրասեմիդ:

Ես բողոքեցի, որ Ֆուրասեմիդի չափաբաժինը պակասեցվի, հորս նշանակվի այլ դեղորայք: Սակայն բժիշկը ասաց, որ բացի Ֆուրասեմիդից՝ այլ ներերակային դեղ չի սրսկվել»,- ասաց Ռ.Այվազյանը: Նա նաեւ հայտնեց, որ սխալ բուժման հետեւանքով հայրը կլինիկական մահ է տարել, ապա մահացել:

Նա ասաց, որ դիմել է ՀՀ նախագահին, ՀՀ ոստիկանապետին, գլխավոր դատախազին, առողջապահության նախարարությանը, կառավարությանը, մարդու իրավունքների պաշտպանին, 10 կառույցների:

Առաջին պաշտոնական պատասխանը Ռ. Այվազյանը ստացել էր ՀՀ կառավարությունից: Ի դեպ, այս հանդիպման մասին տեղյակ էր պահվել առողջապահության նախարարությանը, որի էթիկայի հանձնաժողովում քննվելու է բժշկի հարցը: Բժիշկ Տիգրան Այյանյանը «Առավոտի» հարցին, թե հրավիրվե՞լ է հանձնաժողով, իրավապահ մարմին, ասաց՝ դեռ չէ: Բժիշկն ասաց, որ հասկանում է Ռուբենին որպես որդու, որը փորձել է փրկել հոր կյանքը, սակայն նրա հետ համաձայն չէ: Նա ասաց, որ հիվանդին իր մոտ են բերել սայլակով, որ հիվանդի համար իրեն խնդրել է Ռուբենի հորեղբայրը:

Մեր հարցին, թե ինչպե՞ս էր հիվանդի վիճակը, երբ բերվեց իր մոտ՝ բժիշկը պատասխանեց. «Ծանր էր, շատ ծանր: Դեռ չպառկեցրած անկողնում, սկսեցինք նրան հետազոտել: Սրտային անբավարարություն էր մոտը, միակողմանի արյան հոսքը չէր ապահովվում»:

Ռուբեն Այվազյանն ասում էր, որ հայրն ինքն իր ոտքով է գնացել բուժհիմնարկ, մինչդեռ բժիշկն ասում էր՝ սայլակով է բերվել:



Ռուբեն Այվազյանը բժիշկներին մեղադրում է հոր մահվան մեջ:



Բժիշկ Տիգրան Այյանյանը մահացածի որդուն մեղադրում է ինքնագործունեության համար:

Ռուբեն Այվազյանն ասում էր, որ հոր մոտ չէր կարող 15-20 լիտր հեղուկ լինել, իսկ բժիշկն ասաց, որ ամբողջ օրգանիզմում կար մինչեւ 20 լիտր հեղուկ, այտուցված էր որովայնի շրջանը: «Վերջին 10 օրում հիվանդը նստած է եղել: Առաջին օրը կշռել ենք նրան: 1800 մեզ տալուց հետո հիվանդի վիճակը լավացավ, կիսանստած մի քանի ժամ քնեց»,- հավելեց նա:

Բժիշկը նաեւ ասաց, որ հիվանդի տղայի կողմից արգելվել է հետագայում միզամուղ տալը: Մեր հարցին, թե հիվանդատերերի նմանօրինակ արգելքների ժամանակ արդյոք բժիշկն այդ մասին հայտնո՞ւմ է վերադասին, մասնագետների հետ խորհրդակցո՞ւմ է, բժիշկը պատասխանեց, որ դրա անհրաժեշտությունը չի եղել:

«Ես կարողացա համոզել հերթապահ բժշկին, որ նշանակվի գեմոդեզ-ներերակային: Պարզվեց, որ հիվանդանոցում, բացի Ֆուրասեմիդից, այլ դեղ չկա: Շտապ 5 րոպեի ընթացքում ճարեցի նշված դեղը, որից հետո հերթապահ բժիշկը կարգադրեց, որ նշված դեղը միացվի կաթիլային համակարգով: Այս գործողություններից հետո ջրազրկումը եւ առատ քրտնարտադրությունը դադարեց, հայրս վերակենդանացավ»,- ասաց Ռ.Այվազյանը: Իսկ Տիգրան Այյանյանն ասաց. «Կլինիկական մահ չի եղել: Հիվանդատերն իրավացի չէ: Հարցրեք մասնագետներին, թե նման դեպքերում ինչպես կվարվեին նրանք: Ինքը բերել է գեմոդեզ, մենք միացրել ենք, կաթիլներ չի գնացել»:

Առայժմ քրեական գործ չի հարուցված, քանի որ, բացի ոստիկանապետից՝ իրավագետը ոստիկանության բաժին չի դիմել:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

### Ահազանգ՝ Ներքին Չարբախից

Մայիսի 22-ին, ժամը 02.38-ին ահազանգ է ստացվել, որ փլուզվել է Երեւանի Ներքին Չարբախի 2-րդ փողոցի թիվ 28 տան առաստաղը: Դեպքի վայր է մեկնել ՃԿԿ օպերատիվ խումբը: Պարզվել է, որ ամբողջությամբ փլուզվել է թիվ 28 տան առաստաղը:

Զոհեր եւ տուժածներ չկան:

Տան բնակիչներն ապահովվել են ժամանակավոր կացարանով:

### Այրվածք էր ստացել

Տեղեկություն է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Հրաչյա Քոչար 26 շենքի մոտակայքում գտնվող բենզալցակայանում: Երեւանի տարբեր հրշեջ մասերից դեպքի վայր են մեկնել երեք եւ հատուկ հրշեջ ջոկատից մեկ մարտական հաշվարկ, ինչպես նաեւ ՃԿԿ օպերատիվ խումբը:

«Սիվաս» ՍՊԸ-ին պատկանող բենզալցակայանի խողովակաշարի հորանում այրվել է փրփրապլաստ: Հրդեհի հետեւանքով դեմքի հատվածում 1-ին կարգի այրվածք է ստացել Երեւանի Կիեւյան 20 շենքի 11-րդ բնակարանի բնակիչ՝ 1980թ. ծնված Դ. Երանյանը:

### Միջին ծանրության էր

Դեղորայքային թունավորումով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն էր տեղափոխվել Երեւանի բնակչուհի՝ 1993թ. ծնված Ա. Ավետիսյանը: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

### Օձն անվտանգ տարածքում է

ԱԻՆ փրկարար ծառայության տեղեկություններով, ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզի Պռոշյան գյուղի Երեւանյան փողոցի թիվ 24 տանը բնակիչները նկատել են օձ, որին որսալու համար անհրաժեշտ է օգնություն: Դեպքի վայր են մեկնել ՃԿԿ օպերատիվ խումբը եւ հատուկ մասնագետը: Մասնագետի կողմից օձը հայտնաբերվել եւ տեղափոխվել է անվտանգ տարածք:

### Վնասի չափը ճշտում են

Տեղեկատվություն է ստացվել, որ ուժեղ քամուց վնասվել են Լոռու Կաթնաջուր գյուղի 3 տան տանիքների կոնստրուկցիաները: Իսկ տեղացած ուժեղ կարկուտի հետեւանքով վնասվել են Լոռու Լեռնահովիտ գյուղի մի շարք բնակելի տների տանիքներ, կոտրվել պատուհանների ապակիներ եւ գյուղատնտեսական նշանակության ցանքատարածքներ: Ստեղծվել է հանձնաժողով՝ հասցված վնասի չափը պարզելու եւ գնահատելու համար:

### Զոհեր չկան

Ահազանգ է ստացվել, որ Երեւան-Եղեգնաձոր ավտոճանապարհի 80-րդ կմ-ում (Քյարքիի հատված) այրվում է ավտոմեքենա: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 21.42-ին, մարվել՝ 21.48-ին:

Ամբողջությամբ այրվել է «Գալաքսի տուր» տաքսի ծառայությանը պատկանող «Շկոդա» մակնիշի 52634 պ/հ ավտոմեքենան: Տուժածներ չկան:

# Հայհոյող ու ծեծող աղջիկների դպրոցով զբաղվում են

## Իսկ 5 մանկապարտեզի տնօրենի արդեն ազատել են աշխատանքից

Այս օրերին բուռն քննարկումներ են գնում youtube-ում հայտնված այն աղմկահարույց տեսանյութի առիթով, որտեղ դպրոցական աղջիկները միմյանց հայհոյում էին վերջին խոսքերով ու ծեծում:

ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը օրերս կայացած ասուլիսին նշել էր, որ բարեբախտաբար դեպքը բացառիկ է, եւ դրա համար պատասխանատու են բոլորը, ու չպետք է մեղադրել միայն դպրոցին կամ ծնողներին: Նաեւ ասել էր, թե համապատասխան մարմինները արդեն զբաղվում են կատարվածով:

«Առավոտը» Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանին (լուսանկարում) երեկ խնդրեց կարծիք հայտնել դեպքի վերաբերյալ: «Նախ ուզում եմ կարծիք հայտնել իբրեւ հայ կին եւ մայր, այլ ոչ թե որպես պաշտոնյա: Ես շատ մտահոգ եմ եւ շատ զարմացած: Ինձ համար կատարվածը իրադարձություն էր, որ այդ միջադեպի հերոսները աղջիկներ են... Թերեւս սովոր ենք տղայական չարաճճիություն, ինքնահաստատման կռիվներ տեսնել, բայց հայ աղջիկների՝ երբեք»,- պատասխանեց վարչության պետը: Նա հավելեց, որ «իրադարձությունը» կատարվել է Երեւան քաղաքի թիվ 102 դպրոցում, տեսանյութը թեեւ նոր է youtube-ում, բայց նկարվել է 2010 թվականին: Ըստ Գայանե Սողոմոնյանի, կռվող աղջիկներից մեկն արդեն



ավարտել է դպրոցը, մյուսը դեռ սովորում է 9-րդ դասարանում: Համապատասխան հանձնարարականներ կան՝ զբաղվել դպրոցով, եղել է նաեւ այցելություն այդ կրթօջախ:

Թիվ 102 հիմնական դպրոցի տնօրեն Ռուզաննա Հայրապետյանը մեզ հետ զրույցում սկզբում հերքեց, թե միջադեպը իրենց դպրոցին է վերաբերում, ասաց, որ տեսանյութից տեղյակ չէ, ապա պատճառաբանելով զբաղվածությունը՝ «կախեց» լսափողը:

Դառնալով Երեւանի քաղաքապետարանին, հավելենք, որ կրթության վարչության պետ Գայանե Սողոմոնյանը երեկ լրագրողներին տեղեկացրեց նախադպրոցական եւ դպրոցական հաստատություններում 2011-2012 ուստարում իրականացված ծրագրերին:

Նա ասաց, որ, օրինակ, եթե նախկինում մանկապարտեզների տնօրեններին զուտ նշանակում էին, ապա այժմ սահմանած նոր ընթացակարգի եւ կանոնակարգի համաձայն են նշանակվում: Ներկայումս շուրջ 30000 երեխա անվճար մանկապարտեզ է հաճախում, դժվարություններ կային՝ կապված խմբասենյակների հետ, որոնք վերացվում են: Նախկինում վարձակալության տրված խմբասենյակները վերանորոգվում ու տեսքի են բերվում, մանավանդ մանկապարտեզ հաճախելու համար շուրջ 7000 երեխա է հերթագրված:

Տիկին Սողոմոնյանը նշեց, որ քաղաքապետի որոշման համաձայն, արդեն ստեղծվել է երեխային մանկապարտեզ ընդունելու օրինակելի փաստաթղթերի ցանկ, գործում է 6 կենտրոն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

«Սննդի կազմակերպման հարցը եւս շատ կարեւոր է քաղաքապետարանի համար»,- նշեց վարչության պետը՝ հավելելով, որ այդ «մասով» ուսումնասիրություններ են իրականացվել 46 մանկապարտեզներում, աուդիտ՝ 35-ում: Արդյունքում 5 տնօրեն ազատվել է աշխատանքից, 8-ը՝ կարգապահական տույժի ենթարկվել, եւս 8-ին հայտարարվել է խիստ նկատողություն: Մի շարք մանկապարտեզներ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ 3,5-4,5 տարեկան երեխաների համար ապահովվել են 1268 աթոռակներով եւ 232 սեղաններով:

Վերջին զանգի «մասով» Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը օրերս խորհրդակցություն է հրավիրել եւ խիստ հանձնարարականներ տվել քաղաքապետարանի բոլոր վարչություններին: Վերջին դասը մայրաքաղաքի դպրոցներում լինելու է մայիսի 25-ին, ժամը 10-15-ի սահմաններում:

Նույն օրը ժամը 18-23-ը Ազատության հրապարակում կկայանա տոնական համերգ, որը կավարտվի հրավառությամբ: Տիկին Սողոմոնյանն ասաց, որ տարածքում հերթապահելու են շտապբուժօգնության, հրշեջ ծառայությունները, ոստիկանության հասարակական կարգի պահպանության վարչությունը: Ըստ կրթության վարչության պետի, դպրոցների տնօրենները արդեն գրավոր շրջաբերականներ են ստացել այն մասին, որ պարտավոր են մինչեւ տոնական արարողության ավարտը լինել իրենց դպրոցի շրջանավարտների հետ:

«Բոլոր ծնողներին, ուսուցիչներին եւ դասղեկներին կոչ ենք արել լինել աչալուրջ եւ սահմանափակել անիմաստ հաճույքները, որոնք կարող են վատ վախճան ունենալ»,- տեղեկացրեց վարչության պետը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### Հաղթողներից մեկը թիվ 35 դպրոցից է

ՀՀ ԿԳ նախարարության հայտարարած դպրոցական առարկայական օլիմպիադային, որն ամփոփվել է օրերս, ի թիվս 63 երեխայի, Ն. Գոգոլի անվան թիվ 35 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Ilնա Մուշեղյանը եւս արժանացել է առաջին կարգի պատվոգրի՝ ռուսաց լեզվից: Ինչպես տեղեկացրեց թիվ 35 դպրոցի փոխտնօրեն եւ ռուսաց լեզվի ուսուցչուհի Գրետա Սարգսյանը, նույն աշակերտն անցյալ տարի մասնակցել էր դպրոցական օլիմպիադայի եւ հաղթահարել միայն քաղաքային փուլը: «Մեր դպրոցի տնօրեն Ասատուր Սարյանը ջանք չի խնայում եւ մշտապես օգնում է աշակերտներին պատրաստվել օլիմպիադաներին: Իլոնայի հետ պատրաստվել ենք հանգամանալից, ուսումնասիրել բոլոր առարկաները, առաջնորդվել նաեւ առարկաների ինտերնետային հարցաշարերով»,-հավելեց տիկին Սարգսյանը:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

### «Մեկ կադր՝ մեկ րոպեն» սկսվում է

Մայիսի 24-31-ը Երեւանում կընթանա «Մեկ կադր՝ մեկ րոպե» 10-րդ միջազգային փառատոնը: Ինչպես «ԱրմինՖոյին» հաղորդել է փառատոնի նախագահ Գագիկ Ղազարեն, փառատոնում կներկայացվի ավելի քան 300 ֆիլմ՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Բելգիայից, Արգենտինայից, Ճապոնիայից, Հնդկաստանից, Թուրքիայից եւ այլ երկրներից: Մեկրոպեանոց ֆիլմերի ծրագիրը ներառում է 61 ժապավեն, կարճամետրաժ ֆիլմերինը՝ 23, իսկ «Կինո առանց սահմանների» ծրագիրը՝ 17 ֆիլմ: Այդպիսով, մրցութային ծրագրում ներկայացված է 101 ժապավեն, իսկ արտամրցութայինում՝ 21:

# «Մանեքենին հագցնել-կանգնեցնելը դեռ դիզայն չէ»

## Հավաստիացնում է գեղանկարիչ, դիզայներ Շամիր Շահիրյանը

Գեղանկարիչ, դիզայներ Շամիր Շահիրյանը 1980-ականների կեսերին ստեղծագործական գործունեությունը սկսել է ոչ միայն նկարչության, այլեւ Մնջախաղի թատրոնում դերասանական աշխատանքով: ՀՀ նկարիչների միության անդամ չլինելու պարագայում անգամ 1987-ին համամիութենական ցուցահանդեսում նրա «Պատուհան» կտավը գնվել է: Տարիների ընթացքում արվեստագետի գործունեության հիմնական ուղղությունը դարձավ դիզայներական աշխատանքը, որոնցում պահպանվեց բեմին քաջածանոթի մտածողությունը: Հավանաբար դա էր պատճառներից մեկը, ինչպես նաեւ արտիստական ընտանիքի որդի լինելու հանգամանքը (սիրված դերասանուհի Էվելինա Շահիրյանի զավակն է), որ Շամիրը ավելի շատ դիզայներական ձեւավորումներ իրականացրեց հեռուստատեսությունում («Հայրենիք», «Հ1» եւ այլն) եւ բեմում, այսինքն՝ այն միջավայրերում, որտեղ հանդես են գալիս արտիստները: Վերջիններիս բնորոշմամբ՝ հարմար է հանդես գալ այն միջավայրում, որտեղ նախագծում, ձեւավորում եւ իրականացնում է բազմաշնորհ արվեստագետը:

Օրերս սեփական դիզայներական լուծումներով 1995թ. ստեղծված Երգի պետական թատրոնում՝ 50-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյին ներկայացավ Շամիր Շահիրյանը: Նա վերջերս էլ ստանձնել է Երեւանի Մնջախաղի պետական թատրոնի գլխավոր նկարչի պաշտոնը: Այս օջախում 2005թ. Ժիրայր Դադասյանի ռեժիսուրայով եւ Շ. Շահիրյանի նկարչական ձեւավորմամբ բեմադրված «Շերանիկ» ներկայա-



ցումը ընդամենը ամիսներ անց Սիբիուի (Ռումինիա) միջազգային փառատոնում որակվեց որպես հայկական ազգային թատերական նմուշ: Բեմադրությունը պատկերում է Անի մայրաքաղաքի կենցաղը՝ ըստ Հաղպատի ավետարանի, հետեւաբար այն իրականացվել է վերջինիս մանրանկարների մոտիվներով: Այս աշխատանքը ուշադրության արժանացավ նաեւ Եկատերինբուրգում եւ այլուր, ուր հիշատակվում էր բարձրարվեստ նկարչի անունը: «Առավոտի» առաջին հարցը հետեւյալն էր՝ արդեն ինքնուրույն ձեռագիր ունեցող թատրոնում ի՞նչ «վերափոխումներ» է պատրաստվում կատարել մասնագետը. «Գլխավոր նկարչի պարտականությունն է զբաղվել ոչ միայն բեմադրական, այլեւ այլ հարցերով՝ սկսած թատրոնի իմիջից»:

Ծանոթ լինելով արվեստագետի գործունեությանը, դիմեցինք նրան՝ եզակի մասնագետներից եք, ով 1980-ականների կեսերին աշխատել է մեզանում միակ գովազդային ձեռնարկությունում՝ «Հայառեկլամում», խնդրում ենք զուգահեռներ անցկացնել այն տարիների եւ վերջին շրջանի դիզայներական ոլորտների միջեւ: «Խորհրդային տարիներին մասնակցել ենք նաեւ Բուդապեշտում կայացած դիզայներների միջազգային մրցույթին: Վերադարձել ենք գլխավոր մրցանակով, նույնիսկ օրիգինալ դիզայներական աշխատանքի համար սահմանված պարգեւով: Այն տարիներին միջազգային ասպարեզում կար դիզայներների հայկական դպրոց ասվածը, ինչը, ցավոք, այսօր, ուղիղ ասած՝ չկա»,- հայտնեց Շամիր Շահիրյանը: Խնդրանքին՝ մանրամասնել վերջին միտքը, մեր զրուցակիցն ասաց. «Կոնկրետ իմ աշխատանքը խորհրդային տարիներին Սայաթ-Նովայի պողոտայում գտնվող ձայնապնակների «Տավիղ» խանութն էր: Ընկերներիս հետ աշխատել եմ այն տարիներին հայտնի գեղարվեստի սրահում, որ տեղակայված էր Թումանյան փողոցում... Մեր հիմնական աշխատանքը ցուցափեղկերի ձեւավորումն էր: Այսօր բրենդային կոչվող խանութներում չենք տեսնի դիզայներական աշխատանք՝ մանեքենին հագցնել եւ ցուցափեղկում կանգնեցնելը դեռ դիզայն չէ»: Իսկ թե ինչպես է վերաբերվում ինտերիերի դիզայներական մոտեցմանը, ինչն աշխարհում ամենաթանկ համարվողն է, Շամիրը նախ մեջբերեց իր հասցեին հնչող ընկերների խոսքը՝ «ահավոր սկզբունքային ես...», հետո էլ հավելեց. «Իսկապես վճարը բարձր է, բայց չեմ կարող զոհ գնալ պատվիրատուի ճաշակին ու իրահանգներին, դրա համար էլ ինտերիերով չեմ զբաղվում»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

VIVACELL MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի նոր՝ Facebook SMS ծառայությունը թույլ կտա Facebook-ում շփվել նաեւ SMS հաղորդագրությունների միջոցով

22-ը մայիսի, 2012թ., Երեւան, Հայաստան ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, ուրախ է տեղեկացնել, որ այժմ «Facebook SMS» ծառայության շնորհիվ կարելի է բջջայինի միջոցով շփվել Facebook-ում՝ առանց ինտերնետ օգտագործելու: Ակտիվացնելով այն՝ SMS-ի միջոցով կարելի է ստանալ հաղորդագրությունները, պատի գրառումները, մեկնաբանությունները, ընկերանալու հայտերն ու բազմաթիվ այլ ծանուցումներ, որոնց կարելի է արձագանքել՝ ուղարկելով պատասխան հաղորդագրություններ: Բացի այդ, օգտագործողն ինքը կարող է թարմացնել կարգավիճակը եւ կատարել մի շարք այլ գործողություններ՝ ուղարկելով համապատասխան հրահանգը 32665 համարին:

Այս հնարավորություններից օգտվելու համար օգտագործողը պետք է Facebook-ի իր էջից մուտք գործի «Հաշվի կարգավորումներ» բաժինը, ընտրի «Բջջային» հղումը եւ ակտիվացնի տեքստային հաղորդագրությունները (եթե հաշվում նշված չէ հեռախոսահամար, ապա նախ կպահանջվի ավելացնել համարը): Ծառայությունը կարելի է ակտիվացնել նաեւ՝ ուղարկելով fb կամ f տեքստը պարունակող SMS 32665 կարճ համարին:

Ծանուցումները բաժանորդին կուղարկվեն 32665-ով սկսվող համարներից, եւ յուրաքանչյուրին արձագանքելու համար անհրաժեշտ կլինի պատասխանել հենց տվյալ հաղորդագրությանը:

«Facebook SMS» ծառայության միջոցով ստացվող ծանուցումներն անվճար են, իսկ յուրաքանչյուր պատասխան հաղորդագրություն կամ 32665 համարին ուղարկվող այլ հրահանգ արժե 4 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

*32665 համարին ուղարկվող հրահանգներ*

| Գործողություն | Հրահանգ |
|---|---|
| Ակտիվացնել ծառայությունը | f |
| | fb |
| Թարմացնել կարգավիճակը | «կարգավիճակի տեքստը» |
| Օգնություն* | help |
| | aide |
| Ուղարկել լուսանկարներ՝ Facebook-ի էջում տեղադրելու համար* | photo |
| | photos |
| Անջատել ծանուցումների ստացումը | stop |
| | off |
| Նորից միացնել ծանուցումների ստացումը | on |
| | start |

* Նշված հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է ինտերնետ միացում:

*Ծանուցումների պատասխան SMS-ներում օգտագործվող հրահանգներ:*

| Գործողություն | Հրահանգ |
|---|---|
| Հավանել | like |
| Մեկնաբանել | **«մեկնաբանության տեքստը»** |
| Բզել (ի պատասխան) | p |
| | poke |
| Ընդունել ընկերանալու առաջարկը | add |
| Դադարեցնել տվյալ զրույցի ծանուցումները | mute |

## «Հայաստանի փոքրիկ երգիչների» հերթական հաղթանակը

«Հայաստանի փոքրիկ երգիչները» մասնակցելով երեք տարին մեկ կազմակերպվող մանկական երգչախմբային արվեստում ամենահայտնի փառատոներից մեկին՝ Ստոկհոլմի «Թող ապագան երգի» (Let The Future Sing) փառատոնին՝ ճանաչվել է լավագույնը եւ հնարավորություն ստացել եզակի համերգ ունենալու Ստոկհոլմի լավագույն բեմերից մեկում՝ Konserthuset համերգասրահում: Այսօր «Հենարան» ակումբում թեմայի շուրջ խոսեցին «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Տիգրան Հեքեքյանը եւ փոքրիկ երգիչներ Անուշ Սահակյանը, Ադրինե Հարոյանը եւ Լուսինե Մելիքյանը: Շրջագայությունը սկսվել էր ապրիլի վերջին եւ ավարտվել մայիսի սկզբներին:

Ըստ դիրիժորի՝ այս շրջագայությունը տարբերվեց մյուսներից ունկնդրի հիացմունքի աստիճանով ու բովանդակությամբ, հանդիսատեսը շատ տպավորված էր. «Երբ դու երգում ես քո հարազատ երկրում՝ քեզ ընդունում ու ծափահարում են առանց համեմատելու, իսկ երբ արտասահմանում ես ու անծանոթ հանդիսատեսին ես ներկայանում, դու ավելի ես պարտավորվում եւ մեծ փորձ ձեռք բերում: Մենք արտակարգ ունկնդիր ունեինք, նրանք ծափահարում էին ոչ թե հենց այնպես, այլ ի սրտե: Տարին հագեցած էր «Հայաստանի փոքրիկ երգիչների» ելույթներով, շուտով մենք կմեկնենք Ճապոնիա, ուր կրկին մեր ազգի պատիվը բարձր կպահենք»:

Լատվիայի ժողովրդական արտիստ, խմբերգային արվեստի լեգենդ, 91-ամյա Գիդո Կոկարսը իր տպավորություններով «կիսվել» է համերգի ժամանակ:

«Այն, ինչ այսօր մեզ մատուցեցին, վայելք էր, բարձրագույն հաճույք: Տիգրանի ղեկավարությամբ ելույթն իսկապես կախարդական էր, զարմացնող, սպասված, բայց անսպասելիորեն փայլուն: Ապշեցնում է նաեւ այն, թե ինչպես են կարողանում նրանք մատուցել աստվածային, բարձր արվեստը՝ խաղալով: Չեմ դադարում զարմանալ, թե ինչ վարպետությամբ, ուրախությամբ, գեղեցկությամբ ու պարզությամբ է բարձր մշակույթը մատուցվում այսպիսի բազմազան երգացանկով»:

ԱՆԺԵԼԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ

# Բարձրակարգ ՏՏ ծառայություններ՝ ուսումնական գործընթացի համար

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը բուհերին աջակցության հերթական ծրագիրն իրականացնում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (ՀՊՃՀ): «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը ուրախ է տեղեկացնել, որ աջակցում է տեխնիկական գիտությունների առաջատար համալսարանին:

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը կարեւոր է համարում գիտահետազոտական հզոր համակարգերի եւ ինտերնետի առկայությունը պահանջված կադրերի պատրաստման հարցում: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանին տրամադրել է այս բուհի ուսումնական գործընթացների պահանջներից բխող արժեքավոր սարքավորումներ՝ սերվերային սենյակների պահարան, սերվեր, փոխանջատիչ, օպտիկա-մալուխային ցանցերի փոխարկիչներ եւ «ՎիվաՍել-ՄՏՍ-ի» «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակում գործող 3G երթուղիչներ: Վերջինիս հաշվին ուսանողները հնարավորություն կունենան համալսարանի երկրորդ մասնաշենքի առաջին եւ երկրորդ հարկերում անվճար հիմունքներով օգտվելու Wi-Fi կապից: Առանձին Wi-Fi անկյուն կգործի նաեւ համալսարանի գրադարանում:



PanARMENIAN Photo

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը վերահաստատում է կրթությանն աջակցության իր պատրաստակամությունը եւ քառամյա գործընթացը շարունակում է նոր ծրագրերի տեսքով: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորն իր ռազմավարության հիմքում կարեւոր է համարում ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու պատրաստակամությունը:

«Գիտելիքի հանդեպ ընդգծված վերաբերմունքը հատուկ է հայի մտածելակերպին: Նորարար լուծումներով կահավորված լաբորատորիան եւ տեխնիկայի ժամանակակից միջոցներից օգտվելու հնարավորությունը ուսանողությանը թույլ կտան ավելի արագ բացահայտել սեփական մտավոր ներուժը: Դա կարեւոր հիմք է՝ հատկապես ճշգրիտ գիտությունների հատվածում մեր երկրի մրցակցային առավելությունը լիարժեք դրսեւորելու համար: Հաճելի է արձանագրել, որ երիտասարդությունը պատրաստակամ է արձագանքել նորարարություններին եւ ընտրել բացահայտումների ճանապարհը: Կարծում եմ՝ բուհում ստեղծված հնարավորությունները նոր թափ կհաղորդեն ժամանակակից ձեւաչափով կրթվելու ուսանողների ցանկությանը»,- ասել է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Համալսարանի մասնագիտացման տիրույթն ընդգրկում է ճարտարագիտության եւ տեխնոլոգիաների բոլոր հիմնական ճյուղերը, որոնք ներկայացված են ճարտարագիտական, ճարտարագիտա-տնտեսագիտական եւ բնագիտական պրոֆիլի բակալավրիական ավելի քան 60 եւ մագիստրոսական 35 մասնագիտություններով ու մասնագիտացումներով:

Կրթության երկաստիճան, ապա եռաստիճան համակարգին ինտեգրվելու փորձերը ՀՊՃՀ-ն սկսել է տարիներ առաջ: Բոլոնիայի գործընթացի զարգացումներին համահունչ՝ բուհը հաջողությամբ կիրառում է կրեդիտների կուտակման եւ փոխանցման եվրոպական ECTS համակարգը:

Համալսարանն անդամակցում է Եվրոպական համալսարանների ասոցիացիային, Միջերկրածովյան ճարտարագիտական համալսարանների ցանցին, ԱՊՀ տեխնիկական համալսարանների ասոցիացիային, ինչպես նաեւ ներգրավված է միջազգային գիտակրթական եւ գիտահետազոտական բազմաթիվ ծրագրերում: Բուհում կրթություն են ստանում նաեւ օտարերկրյա քաղաքացիներ: Արտաքին շուկայում Հայաստանի անվիճելի մրցունակության համար «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը կարեւոր է համարում գիտակ կադրեր պատրաստելու բուհերի վճռականությունը: